ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
փիլիսոփայական գիտ. թեկնածու

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿՐՈՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդի պայմաններում միջկրոնական հարաբերությունների եւ կրոնների երկխոսության ծավալումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Դա առաջին հերթին թելադրված է հասարակական կյանքի, տնտեսական, քաղաքական եւ այլ շարժառիթներով կյանքի կոչված դինամիկ փոփոխություններով, հավասարապես նաեւ՝ դրանց տրամաբանական լրացումը հանդիսացող հասարակական կեցության, անհատական եւ հասարակական գիտակցության ու հոգեբանության մեջ տեղ գտած անկանխատեսելի փոփոխություններով: Երկրորդ՝ բազմագործոն այդ փոփոխությունների հետ սերտորեն կապված գործազրկության եւ աղքատության աճը, ժողովրդական զանգվածների անկասելի տեղաշարժերը եւ այլ երեւույթներ օբյեկտիվորեն ձեւավորել են միջքաղաքակրթական եւ միջմշակութային յուրատիպ «հասարակական տարածք»՝ իրեն բնորոշ կրոնական խճանկարով: Երրորդ՝ կրոնների երկխոսության եւ միջկրոնական հարաբերությունների ծավալումը հրամայական է դարձել նաեւ համաշխարհայնացման խորացող քաղաքականության հետեւանքով արմատավորվող այնպիսի հակարժեքների ներդրման արդյունքում, ինչպիսիք են «նոր» ժողովրդական զանգված ստեղծելու եւ ազգային արժեքների «ապազգեւացման» ձգտումները, երիտասարդության մտահորիզոնը եւ հոգեկերտվածքը «որակապես փոխելուն» միտված «զանգվածային մշակույթի» ներդրումը, համընդհանրացնող քաղաքականության անբաժան մաս կազմող զանգվածային տեղեկատվական միջոցների աճող ազդեցությունը, նոր՝ ոչ ավանդական հարանվանությունների, դենոմինացիաների, խարիզմատիկ խմբերի ու շարժումների, ինչպես նաեւ ամենատարբեր համադրական ներփակ կրոնական միավորումների արմատավորումը, որոնք բազմաթիվ հարցերում ուղղված են ազգային եւ կրոնական ավանդական արժեքների դեմ, ոտնահարում են կրոնների ու ազգերի բարոյական ըմբռնումները: Եւ չորրորդ՝ միջկրոնական երկխոսություն ծավալելու գործընթացները մեծապես պայմանավորված են նաեւ պատերազմի ու խաղաղության, բնապահպանական

եւ այլ հիմնախնդիրների լուծման, ինչպես նաեւ կրոնական ծայրահեղականության, արմատականության, ահաբեկչության, այլատեցության, քաղաքական ու ազգային խնդիրների լուծման հարցում կրոնական գործոնը շահարկելու, կրոնական արժեքների հանդեպ վիրավորական ու անհանդուրժող վերաբերմունքի եւ հասարակության հոգեւոր կյանքը խաթարող այլ գործոնների հաղթահարման միտումով:

Այդ ամենով պայմանավորված՝ այսօր **հրատապ են դարձել կրոնների եւ հավատքային տարբեր ընդհանրությունների գոյակցության, փոխադարձ կապի, միջկրոնական հարաբերությունների ընդլայնման, ինչպես նաեւ կրոնական կառույցների եւ հավատացյալների երկխոսություն ծավալելու հիմնահարցերը**:

Միջկրոնական հարաբերությունների կամ արդի կրոնագիտության լեզվով ասած **միջկրոնական երկխոսությունների** ծավալման անհրաժեշտությունն արժեւորվում է մի շարք այլ տեսանկյուններից եւս: Մասնավորապես այն համարվում է քաղաքակրթությունների երկխոսության եւ միջմշակութային հարաբերությունների ծավալման էական գործոններից մեկը, համակարգող մի այնպիսի գործընթաց, որը պայմանավորում է փոխհամաձայնություն հաստատելու ճանապարհով տարբեր կրոնների եւ կրոնական կառույցների միջեւ աստվածաբանական, կրոնաբարոյական, հասարակական-քաղաքական, մշակութային եւ այլ հարցերի համատեղ քննարկումները: Կրոնների միջեւ համագործակցություն եւ երկխոսություն ծավալելու գործընթացները միաժամանակ նպատակ են հետապնդում քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ **մշակել այնպիսի ընդհանրական տեսակետներ եւ համընկնող մոտեցումներ, որոնք իսպառ բացառում են հարկադրանքի պահը եւ կառուցված են փոխադարձ հարգանքի, վստահության եւ հավասարազորության վրա**:

Ինքնին հասկանալի է, որ կրոնների երկխոսության, գործակցության, միջկրոնական հարաբերությունների ծավալումը չի կարող պայմանավորվել միայն արտաքին գործոններով: Այդ գործընթացներն անհնար է պատկերացնել առանց ներքին՝ սուբյեկտիվ գործոնի, առանց համագործակցության պատրաստ, դիմացինի արժեքային եւ հավատքային ըմբռնումներն ընկալող եւ **սեփական համարգի ջատագով լայնախոհ կրոնապետների որդեգրած դիրքորոշման**: Եւ պետք է փաստել, որ Ի. դարավերջին եւ ԻԱ. դարասկզբին կրոնների երկխոսության եւ միջկրոնական հարաբերությունների ծավալման գործընթացում իր անուրանալի ներդրումն է ունեցել նաեւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը, որ բազմիցս անդրադարձել է այդ հիմնախնդիրներին ինչպես միջազգային բարձրագույն ամբիոններից, այնպես էլ գործնական տեսանկյունից:

Այդ պնդման հավաստիությունը ցույց են տալիս բազմաթիվ օրինակները: Դրանցից առաջինը 2000 թ. օգոստոսին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի

ելույթն է ՄԱԿ-ի հովանավորությամբ կազմակերպված «Հազարամյակի աշխարհի խաղաղության կրոնապետների գագաթնաժողովին», որին մասնակցել են «աշխարհի կրոնական խճանկարը ներկայացնող» շուրջ 3500 հոգեւոր գործիչներ[1]:

Բազմափորձ Հայրապետը ՄԱԿ-ի կազմակերպած գագաթնաժողով էր մեկնել այն վստահ համոզմամբ, որ չնայած տնտեսական, հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքում ձեռք բերած անուրանալի նվաճումներին՝ մարդկությունը դեռեւս փորձություններով լեցուն պատմական ընթացք է ապրում, քանի որ դեռեւս որակ են կազմում այն իրավիճակները, երբ երկրագնդի «տաք կետերում» ժողովուրդները հարկադրված են մաքառել իրենց գոյությունը պահպանելու եւ վերապրելու համար: Այդ պնդման վկայությունը միջազգային բարձր ամբիոնից հնչեցրած Վեհափառի հետեւյալ հավաստումն է. «Չնայած վերջին հարյուրամյակում կատարված համընդհանուր զարգացումներին ու առաջընթացին, դարը նշանավորվեց պատերազմներով, կոտորածներով, էթնիկական ու կրոնական հակասություններով եւ ընդհարումներով, մարդկային համապարած տառապանքներով: Արդյո՞ք այս ամենը չեն վկայում միմյանց հասկանալու, ներելու եւ հաշտվելու մեր անկարողության մասին: **Արդյո՞ք այս ամենն այն պատճառով չէ, որ մենք բոլորս շատ հաճախ հանձն չենք առնում պատասխանատվությունը մարդկության վշտերի համար: Արդյո՞ք մեր անհատական եւ հավաքական պարտականությունը չէ արգելակել բռնությունը, անտարբերությունն ու անհանդուրժողությունը**»[2]:

Արդի հասարակական իրականության նյութական եւ հոգեւոր ոլորտներում տեղ գտած այդ երեւույթների հիշատակումը ինքնանպատակ չէ: Նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այդ հարցում նրա համար առաջնային է հիմնախնդրի գործնական տեսանկյունը: Դա է պատճառը, որ նա մեկ անգամ ևս ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ ինչպես անցյալում, նույնպես եւ մեր օրերում հասարակական կյանքում տեղ գտած բռնությունը, անհանդուրժողականությունը, անտարբերությունը, զանգվածային տառապանքները եւ հասարակայնորեն բացասական այլ երեւույթներ շատ անգամ կյանքի են կոչվել կրոնական անհանդուրժողականության եւ ծայրահեղականության հողի վրա: Եւ վստահ, որ հասարակական, տնտեսական, քաղաքական ու մշակութային այլ գործոններին համահավասար

1 Միջկրոնական համագործակցության եւ կրոնների երկխոսության ոլորտում Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի գործունեության միջազգային ճանաչման վկայությունը պետք է համարել 2000 թ. օգոստոսին ՄԱԿ-ի հովանավորությամբ կազմակերպված հանուն հազարամյակի աշխարհի խաղաղության «Դեպի ներողամտություն եւ հաշտություն» կրոնապետների միջազգային գագաթնաժողովի գլխավոր քարտուղար Բանա Ջեյնի հրավեր-հավաստումն այն մասին, որ իր համար մեծ պատիվ է արժանանալ Գարեգին Բ. Վեհափառի, «... իբրեւ աշխարհի ամենից հռչակավոր կրոնական առաջնորդներից մեկի, մասնակցությանը Կրոնական եւ Հոգեւոր Առաջնորդների՝ Հազարամյակի Աշխարհի խաղաղության գագաթնաժողովին». «Էջմիածին», 2000, Թ., էջ 6: Իսկ Հարավային Կորեայի Բուսան քաղաքում տեղի ունեցած՝ Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի համաժողովը սույն թվականի նոյեմբերի 4-ին Վեհափառ Հայրապետին ընտրեց Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի նախագահ՝ առաջիկա ութ տարիների համար:

2 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), Ս. Էջմիածին, 2010, էջ 201-202: Այս եւ հետագա ընդգծումները՝ Ա. Ք.:

մարդկությանը չարիք պատճառող այդ երեւույթները կարելի է եւ պետք է հաղթահարել կրոնների միջեւ ազնիվ, հանդուրժողական, համակեցություն եւ փոխադարձ հարգանք հաստատելու հիման վրա, նա պնդում է նաեւ, որ այդ գործընթացի անքակտելի տարրերը պետք է լինեն դավանական հանդուրժողականությունը, փոխվստահությունն ու փոխադարձ հարգանքը, ինչպես նաեւ՝ հավասարազորության զգացումը: Այդ կապակցությամբ Վեհափառը հավաստում է, որ կրոնական առաջնորդներից «... յուրաքանչյուրը ցանկանում է հարթված տեսնել իր մտահոգությունները, լուծված՝ իր դժվարությունները: Սակայն արդի դարի փոխշաղկապված իրականության մեջ դրանք՝ որքան առանձնակի ու յուրահատուկ, այնքան էլ հարաբերված են նաեւ, եւ նրանց կարգավորման բոլոր խնդիրները պետք է առաջնորդվեն միայն խաղաղ ուղիներով, օրինականության, արդարության եւ իրավունքի հարգումով: **Հիրավի, կարեւոր դերակատարություն է վերապահված մեզ՝ կրոնական առաջնորդներիս եւ սպասավորներիս, որ կոչված ենք հոգեւոր արժեքների սերմնացանը լինելու մեր ժողովուրդների կյանքում, որպեսզի մեր հարաբերություններում արդյունավորվեն բարի կամեցողությունն ու փոխվստահությունը**»[3]:

Դրանով իսկ Գարեգին Բ. Վեհափառը ոչ միայն հավաստում է կրոնների երկխոսության եւ միջկրոնական հարաբերությունների իր հիմնարար մոտեցումը, այլեւ մատնանշում է, որ պրակտիկ կյանքում նման ըմբռնումներով առաջնորդվելը մեծապես կարող է նպաստել ազգերի խաղաղ գոյակցության, արդյունավետ համագործակցության, բռնությունից ու շահագործումից մարդկանց եւ ազգություններին պաշտպանելու հրատապ խնդիրների լուծմանը: Եւ միաժամանակ հավաստում է, որ **այդ մոտեցումն այլընտրանք չունի**, քանի որ, հակառակ պարագային, անխուսափելիորեն կարող են կրկնվել պատմության ընթացքում այդքան հաճախակի պատահող այլատեցությունն ու օտարատեցությունը, որոնք կրոնական պատերազմների եւ զանգվածային կոտորածների ու բնաջնջումների հիմք են դարձել: Ահա թե ինչու վերլուծական այդ տրամաբանությամբ անդրադառնալով նշված երեւույթների ներքին՝ որակական կողմին, նա փաստում է. «**Հոգեւոր ու բարոյական հավերժական արժեքների, ճշմարտության, ազատության, արդարության եւ իրավունքի ոտնահարումը մշտապես դուռ են բացում տարաձայնությունների ու հակամարտությունների**»[4], եւ, միաժամանակ, «ոչ աստվածահաճո այդ

3 Անդ, էջ 506:

4 Անդ, էջ 202: Կրոնապետների միջազգային գագաթնաժողովում միջկրոնական համագործակցության անհրաժեշտությունը, հավասարապես նաեւ հասարակական կյանքում տեղ գտած կրոնական անհանդուրժողականության հաղթահարման հրամայականը Գարեգին Բ. Վեհափառը հիմնավորում է նաեւ պատմական փորձն ընդհանրացնող հետեւյալ պնդմամբ. «Միայն վերջին հարյուրամյակում մարդկությունը վերապրել է համաշխարհային երկու պատերազմ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից մեկ ու կես միլիոն հայեր կոտորվեցին եւ գրեթե նույնքան տարագրվեցին իրենց պատմական հայրենիքից: Եթե միայն մարդկային հասարակությունը ուժ եւ քաջություն ունենար կանխելու այդ կոտորածը եւ կամ ցեղասպանությունից հետո դատապարտելու այդ եղելությունը, Հիտլերը, վեց միլիոն հրեաների ողջակիզումը նյութելիս հնարավորություն չէր ունենա հայտարարել. «Ո՞վ է հիշում հայկական կոտորածները»:

գործընթացները» հաղթահարելու միտումով գագաթնաժողովի մասնակիցներին ներդաշնակության ու հաշտության կոչ է անում, առաջարկելով հիմք ընդունել այն հանգամանքը, որ «Մարդկային ուժից ու իշխանությունից բարձր ու վսեմ արժեք ունեցող հավատն այն միակ հաստատուն հիմքն է, որի վրա կարելի է կառուցել արդար եւ հանդուրժող հասարակություններ, արժանապատիվ կյանք»[5]: Այդ մոտեցումը Գարեգին Բ. Կաթողիկոսը կարեւորում է նաեւ այն կապակցությամբ, որ «...աշխարհի տարբեր անկյուններում այսօր առկա են բռնություն, պատերազմ ու սով, պայթյունավտանգ իրավիճակներ: Այս եւ նման այլ հիմնախնդիրները կարոտ են համընդհանուր հոգածության ու միացյալ ջանքերի»[6]:

Համոզված, որ **հավատը եւ խաղաղությունը գտնվում են ներդաշնակ միության մեջ**, որ «Բոլոր կրոնները փնտրում են խաղաղությունը երկնքի ու երկրի, եւ առաքելություն ունեն փնտրելու խաղաղությունը մարդկանց մեջ»[7], Վեհափառ Հայրապետն այդ հիման վրա առաջադրում է կայուն, խաղաղ եւ ներդաշնակ աշխարհակարգ ստեղծելու մանրակերտ, որը նա բնութագրում է որպես **մարդկության «կորուսյալ դրախտի» վերականգնում**: Եւ այդ տեսլականը նա հիմնավորում է այն պատճառաբանությամբ, որ «...այսօր էլ աշխարհը հուզում են միջպետական, ազգային ու կրոնական հակասություններ, տագնապներ են հնչում, բոթեր են լսվում բռնությունների, ահաբեկչության եւ արյունահեղությունների: Այսօր էլ աղքատության, օրինազանցության, իրավունքի ոտնահարման եւ այլ չարիքներ խոռվում են հասարակությունների կյանքը, առկա են առողջապահական, բնապահպանական եւ այլ խնդիրներ, որոնք պահանջում են անհետաձգելի վճիռներ ու միասնական մոտեցումներ»[8]:

Գարեգին Բ. Կաթողիկոսը համոզված է, որ վերոնշյալ խնդիրների լուծումը անհնար է իրագործել միայն հարկադրանքի ճանապարհով: Եւ վստահ, որ առանց կրոնական համագործակցության եւ փոխըմբռնման հնարավոր չէ արդյունավետ դիմակայել հասարակական կյանքում տեղ գտած այդ, ինչպես նաեւ «նորօրյա մարտահրավերներով» կյանքի կոչված բացասական այլ երեւույթներին՝ նա «մարդկության կորուսյալ դրախտը» որոնելու գործուն ճանապարհ համարելով փոխադարձ հարգանքի վրա կառուցված միջկրոնական համագործակցությունը, պնդում է. «Բացառիկ այս գագաթնաժողովի մասնակիցներին նայելով, Մենք մտածում ենք, որ ավելի քան հինգ միլիարդ մարդկանց ուժ ենք ներկայացնում, որ հավաքվել ենք ամբողջացնելու, ի մի բերելու մեր ջանքերը՝ ճշմարիտ հավատի, հոգեւորի արժեւոր-

85 տարի անց Հայաստանը եւ ողջ աշխարհում սփռված հայությունը դեռեւս սպասում են Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու համընդհանուր դատապարտմանը, որ որպես արդարության հաղթանակ՝ նույնքան անհրաժեշտ է աշխարհի բոլոր ժողովուրդներին, նաեւ թուրք ժողովրդին, քանզի չարիքը բացառելու ճանապարհը չարիքի մերժումն է մեր հոգիներում». անդ, էջ 202:

5 «Էջմիածին», 2000, Թ., էջ 7:

6 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընտիր պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 202:

7 Անդ, էջ 515:

8 Անդ:

ման ճանապարհով վերջ դնելու բռնություններին եւ նպաստելու խաղաղության ու հաշտության ամրապնդմանը»[9]: Պետք է նկատել, որ այս պարագայում իսպառ բացակայում է հիմնահարցի նկատմամբ պարզեցված կամ զգացմունքային մոտեցումը: Վեհափառի մտքերի ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս հակառակը: Նա համակարգված մոտեցմամբ կոչ է անում հաղթահարել ինչպես անցյալում տեղ գտած կրոնական տարաձայնությունները, այնպես եւ մերօրյա մարտահրավերները: Եւ համոզված է, որ այդ գործընթացները կարող են իրագործվել միայն կրոնների փոխադարձ համաձայնության եւ համագործակցության պարագայում, ուստի ներկաներին հորդորում է. «Եկել է ժամանակը, որպեսզի մենք 21-րդ դարի համար կերտենք այլ իրականություն: Թեպետ կան տարբերություններ մեր հավատքների միջեւ, որպես եկեղեցական ու հոգեւոր պետեր, մենք բոլորս հավատում ենք սիրո եւ կարեկցանքի կարեւորությանն ու նշանակությանը՝ որպես պայմաններ հասնելու ներողամտության եւ հաշտության: Ամենեին դյուրին չէ այդ ճանապարհը: Ով հաշտություն է փնտրում, պիտի սիրի ճշմարտությունն ու արդարությունը եւ անխախտորեն հարգի անհատների ու ազգերի իրավունքները»[10]:

Այդ ամենն աներկբա վկայում են, որ Վեհափառի մոտեցումներում մարդկության «կորուսյալ դրախտի» որոնումները սերտորեն շաղկապվում են հասարակական կյանքում գործառական կարեւորագույն դերակատարություն ունեցող կրոնական ավանդությունների եւ բարոյական արժեքների հետ: Եւ դա ունի իր հիմնավոր պատճառները: Այս հարցում Գարեգին Բ. Կաթողիկոսի մեկնաբանական մոտեցումների հիմքում ընկած են արարչության մասին հոգ տանելու եւ հասարակական արդարությունն ու մարդկային արժանապատվությունը պահպանելու աստվածային պատվիրանները: Վերջիններս կյանքի կոչելու գլխավոր պայմանը, պնդում է նա, նույնպես աստվածային պարգեւ է, այն է՝ մարդու ազատության անքակտելի իրավունքը[11], որը, սակայն, չպետք է շփոթել ամենաթողության հետ: Վեհափառը պնդում է, որ **ազատությունն ու բարոյական պատասխանատվությունը անբաժան են միմյանցից եւ երբ խախտվում է այդ ներդաշնակությունը, խախտվում է նաեւ հասարակական կյանքի համակեցությունն ու բնականոն ընթացքը**: Այդ ամենի ընդհանրացմամբ Հայոց Հայրապետը շեշտում է, որ մարդ անհատի, հավասարապես նաեւ բոլոր ժողովուրդների նվիրական ձգտումն է ապրել խաղաղ, բարօր եւ առաջընթաց կյանքով, այնինչ՝ երկիր մոլորակի «տարբեր անկյուններում այսօր եւս առկա են բռնություն, պատերազմ ու սով, պայթյունավտանգ իրավիճակներ»: Դա է պատճառը նաեւ, որ «Աշխարհն այսօր կքած է բազմաթիվ խնդիրների եւ

9 Անդ, էջ 202:

10 Անդ:

11 Մարդու իրավունքների՝ աստվածային շնորհ լինելու ընկալման փաստն է վկայում 2006 թ. Մոսկվայում Կրոնական առաջնորդների գագաթնաժողովի մասնակից 49 երկրների ավելի քան հարյուր կրոնական առաջնորդներին ուղղված Վեհափառի կոչը. «**Մենք պետք է մեր ուժերը ուղղենք մարդու իրավունքների պաշտպանությանն ու նրա ազատ կամքի դրսեւորմանն իբրեւ Աստծո հատուկ շնորհի՝ տրված Իր ստեղծած արարածին**». անդ, էջ 508:

մարտահրավերների ծանրությունից, որոնց մեջ՝ աղքատությունը, անարդարությունը, պատերազմներն ու ահաբեկչությունը»[12]:

Մարդու՝ ատրվածային շնորհ հանդիսացող իրավունքները ոտնահարող այդ եւ նմանատիպ բացասական այլ երեւույթների հաղթահարման վճռական գործոններից մեկը համարելով կրոնների երկխոսությունն ու համագործակցությունը՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը զգուշացնում է, որ այդ հիմնախնդիրների լուծումը բացառում է ցանկացած միագիծ մոտեցում: Եւ առկա հիմնախնդիրների լուծման գործում առաջնային համարելով բազմագործոն մոտեցման անհրաժեշտությունը՝ հավաստում է. «Մեզ համար հրատապ է ոչ միայն կրոնական ազատությունը հարգելու սկզբունքը, այլեւ ազգերի ինքնության պահպանության, նրանց կրոնական զգացումները հարգելու խնդիրը, ազգերի իրավունքի եւ ազատության ճանաչումը՝ պաշտպանելու իրենց նախնյաց հոգեւոր-մշակութային ժառանգությունը, դարերով ձեւավորված ազգային արժեքների համակարգը, որը հիմքն է տվյալ ազգի ինքնության»[13]: Հայոց Հայրապետի համոզմամբ բազմագործոն այդ համակարգի յուրաքանչյուր տարր ինքնին կարեւոր է: Եւ այդուհանդերձ, անդրադառնալով «հասարակական կյանքում կրոնների կենսունակ ուժ լինելու» դերի արժեւորմանը՝ ատրվածաբանական մոտեցմամբ հիմնավորում է, որ կրոնը ոչ միայն հասարակական կյանքի հիմնարար կառուցատարրերից է, այլեւ՝ հասարակական կյանքի բարոյականացման եւ հումանիզացման կարեւորագույն գործոնը: Անդրադառնալով այս վերջինին՝ պարզաբանում է. «Եկեղեցիները եւ կրոնական կազմակերպությունները կարեւոր դեր ունեն այդ հրամայականներին ու փորձություններին բարոյական եւ արդարացի լուծումներ գտնելու հարցում: Մարդկությունը առավել վստահ քայլերով կընթանա դեպի իր խաղաղ, անվտանգ եւ բարեկեցիկ կյանքը, երբ մենք դիտենք մեզ Ս. Պողոս առաքյալի՝ մեր մեկ մարմին լինելու խոսքերի տեսանկյունից: Երբ, լինելով մարմնի մեկ անդամը, մենք զգում ենք ուրիշների ցավը, ինչպես մեր սեփականը, եւ նույն կերպ զգում ենք միմյանց ուրախությունը: Յուրաքանչյուրս միմյանց անդամ՝ մեկի ուժը նաեւ մյուսինն է եւ բոլորինը»[14]:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար անվերկբա է, որ հասարակական, տնտեսական, քաղաքական, բնապահպանական եւ արդի հասարակական կյանքը հուզող այլեւայլ հիմնախնդիրների լուծումն անհնար է՝ առանց մարդ անհատի հոգեւոր կա-

12 «Էջմիածին», 2004, Զ., էջ 6: Կրոնական առաջնորդների մեկ այլ գագաթնաժողովում Գարեգին Բ. Հայրապետը անդրադառնալով այդ հիմնախնդիրներին՝ նշում է. «Մենք բոլորս այստեղ հավաքվել ենք միասին՝ առաջնորդված եղբայրական սիրով եւ արդի աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ ընդհանուր մտահոգությամբ: Սոցիալ-տնտեսական խնդիրները՝ գործազրկությունը, աղքատությունը, հարկադրված արտագաղթն այսօր խառնվել են աշխարհականացման գործընթացին՝ վտանգելով հասարակության կյանքում հոգեւոր արժեքները: Մենք այսօր էլ շարունակում ենք վկաներ լինել այնպիսի արժեքների ոտնահարման, ինչպիսիք են մարդու իրավունքները, նրա արժանապատվությունը, սոցիալական արդարությունը, ժողովուրդների եւ ազգերի բարեկամությունը». **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 508:

13 Անդ, էջ 512:

14 «Էջմիածին», 2004, Զ., էջ 6:

տարելության, առանց մարդու նկատմամբ կրոնական ու քաղաքական ղեկավարների մտահոգության եւ հոգատար վերաբերմունքի: Եւ համոզված, որ «արդի հասարակության առջեւ ծառացած վերոնշյալ հիմնախնդիրները կարող են համընդհանուր հոգածության ու միացյալ ջանքերի»՝ Գարեգին Բ. Հայրապետը հիմնախնդիրների լուծման համար առաջադրում է այն մոտեցումը, թե «Մարդկության պատմությունը համոզում է, որ առանց հոգեւոր ու բարոյական արժեքներով կյանքի իմաստավորման ու զորացման, անարդյունք է հասարակությունների խաղաղ գոյակցության պահպանումը: Առանց այս արժեքների մարդկությունը անզոր է անկորուստ ու անխաթար պահպանել աշխարհը»[15]:

Այդ ամենը թույլ են տալիս պնդել, որ կրոնների երկխոսության, միջկրոնական հարաբերությունների եւ գործակցության հիմնախնդիրների վերաբերյալ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի մոտեցումները միանգամայն հավասարակշռված են եւ հետեւողական: Աշխարհի հնագույն կրոնական կառույցներից մեկի առաջնորդի համար աներկբա է, որ կրոնների երկխոսության գործընթացում իսպառ պետք է բացառել դավանաբանության եւ պաշտամունքի ոլորտում փոխադարձ զիջում կատարելու միտքն անգամ: Նրա ըմբռնումներին հավասարապես խորթ են նաեւ **հասարակական կյանքում հոգեւոր ու նյութական գործոնների** հակադրության անպտուղ փորձերը: Եւ ինչպես փաստերն են վկայում, կրոնների միջեւ երկխոսության պատմական փորձի ընդհանրացմամբ նա ցույց է տալիս, որ համագործակցության գործընթացներն անբաժան են հանգուցային նշանակություն ունեցող մտքի, մշակույթի, բարոյականության ու հասարակական կեցության ձեւավորման խնդիրներից: Մերօրյա հասարակական կյանքում մեծապես կարեւորելով կրոնի դերը՝ Վեհափառը համոզված է, որ միայն այդ պարագայում կրոնը կշարունակի ծառայել խաղաղության ամրապնդմանը եւ քաղաքակրթությունների միջեւ երկխոսության ծավալմանը, որով էլ նվազագույնի կհասցվեն կրոնը հակամարտությունների եւ երկպառակության վերածելու վտանգավոր փորձերը: Արտահայտելով տարբեր ժողովուրդներին եւ մշակույթներին համախմբելու կրոնի մեծ ներուժի նկատմամբ իր վստահությունը՝ նա ՄԱԿ-ի Գագաթնաժողովի մասնակիցներին հայտարարում է. «Մեր դիրքորոշումը հստակ է: Ինչպիսի կերպարանափոխությունների էլ ենթարկվի աշխարհը, մարդկության կյանքի սկզբնական ու ճշմարիտ պատկերի, բնույթի եւ նպատակի վերականգնումը հնարավոր է միայն Ստեղծո առաջնորդությամբ, հավատքի ճանապարհով: **Մենք կոչված ենք ջանադրորեն գործելու՝ մեզ հավատ ընծայողներին ցույց տալու համար մարդկային համերաշխության ստեղծագործ ուժը, որպեսզի երկխոսության ու համագործակցության միջոցով գալիք սերունդներին թողնենք խաղաղ ու ապահով Երկիր մոլորակ**»[16]:

Այն, որ կրոնների երկխոսության եւ փոխհամաձայնության վրա հենված համագործակցությունը երկրնտրանք չունի կայուն եւ արդար համակեցություն, ինչպես

15 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 202:
16 Անդ, էջ 203:

նաեւ փոխադարձ հարգանքի վրա հենված ազգամիջյան հարաբերություններ հաստատելու գործում, Գարեգին Բ. Հայրապետը մեկ անգամ չէ, որ բարձրաձայնել է միջազգային եւ տարածաշրջանային հեղինակավոր ամբիոններից: Նա, միաժամանակ, վերը թվարկված եւ անձնական հանդիպումների ու երկխոսությունների մակարդակով իր գործուն մասնակցությունն է բերել կրոնական համագործակցության հարցերը կյանքի կոչելուն միտված պրակտիկ գործընթացներում:

Վկայություններից մեկը Անդրկովկասում եւ սահմանակից տարածքներում կայուն խաղաղություն հաստատելու եւ ամրապնդելու միտումով Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Ալեքսի Բ. Պատրիարքի միջնորդությամբ 2000 թ. նոյեմբերին Մոսկվայում տեղի ունեցած հանդիպումը եւ բանակցություններն են Կովկասի ժողովուրդների բարձրագույն կրոնական խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ Շեյխ-ուլ-Իսլամ Ալլահշուքյուր Փաշա-Զադեի հետ, որի նպատակը, Վեհափառի հավաստմամբ, եղել է Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության կարգավորման գործընթացի խթանումը «...ի շահ մեր երկու՝ հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների ապահով ու բարօր կյանքի եւ ի նպաստ տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման գործընթացի»[17]: Եռակողմ այդ քննարկումների արդյունք հանդիսացող համատեղ հռչակագրում կողմերը հավաստում են նաեւ «խոսքով եւ գործով» ղարաբաղյան հակամարտության հաշտեցման գործին իրենց աջակցությունը: Պնդելով, որ ղարաբաղյան հակամարտությունը արդյունք է աղետաբեր խորհրդային բռնատիրական համակարգի ազգային քաղաքականության՝ նրանք համամիտ են, որ այդ հակամարտությունը չպետք է լուծվի ռազմական ճանապարհով, այլ «...պետք է հաղթահարվի երկու ժողովուրդների օրինական հետաքրքրությունները հաշվի առնելով, կողմերի համաձայնությամբ եւ միջազգային համակեցության ճանաչված չափանիշների համաձայն»[18]: Միաժամանակ, մտահոգություն հայտնելով ծայրահեղականության հնարավոր դրսեւորումների դեմ՝ բանակցող կողմերը վճռականորեն դատապարտում են «...մարտնչող ազգայնամոլությունը, օտարատեցությունը, էթնիկական գերազանցության տարփողումը, ազգային զգացմունքների նվաստացումը» եւ կոչ են անում «...հարգել ազգային փոքրամասնությունների իրավունքները, նրանց կրոնական եւ մշակութային ավանդույթները»[19]:

Հավաստելով միմյանց նկատմամբ ունեցած հարգանքը՝ բանակցող հոգեւոր առաջնորդները հայտարարում են նաեւ, թե հետամուտ են, որ իրենց «Ժողովուրդների եւ պետությունների միջեւ արդար խաղաղության ընդունելի համաձայնություն ձեռք բերվի», եւ համատեղ դիմելով իրենց երկրների Նախագահներին, կարեւորում են, որ անկախ ազգությունից եւ հավատից, հանուն բարօրության եւ երջանկության «... կրոնական համայնքները ավելի ակտիվ ելույթ ունենան կյանքի սրբազան պարգեւի

17 Անդ, էջ 497:
18 Անդ, էջ 538:
19 Տե՛ս անդ, էջ 539:

համար, պատերազմների եւ բռնության դեմ, համառորեն ճանապարհներ որոնեն խաղաղության հաղթանակի համար»[20]: Եւ ինչպես փաստերն են վկայում, վստահ, որ իրական խաղաղությունը միայն Աստծու օրհնությամբ սրբագործված խաղաղությունն է, բանակցող կողմերը վճռականորեն դատապարտում են «անգուսպ ազգայնականության, անհանդուրժողության, օտարամերժության եւ մարդատեցության» ցանկացած դրսեւորում եւ պնդում են «պատմությամբ եւ այժմեականությամբ հաստատված ակներեւ իրողությունը» առ այն, որ առանց երկխոսության, առանց փոխադարձ ըմբռնողության անհնար է խաղաղության եւ դրացիական հարաբերությունների հաստատումը: Իսկ այդ գործընթացում նրանք կրոնական գործոնը կարեւորում են հատկապես այն տեսանկյունից, որ «Հավատքի, բարության, կարեկցության ներուժը, որ ընդհանուր է քրիստոնեության եւ իսլամի համար, կարող է եւ պետք է հաշտեցնող հզոր ուժ դառնա: Նա, ով միջկրոնական ատելություն է քարոզում, ծանրագույն մեղք է գործում Բարձրյալի առջեւ: Չարությունը, ատելությունը, նվաճողությունը կոպիտ կոչ է բոլոր աշխարհների կրոնների սրբազան գաղափարների դեմ, մեղսալի հարձակում այն բանի վրա, ինչը պատկանում է Արարչին»[21]:

Կրոնների միջեւ երկխոսության, միջկրոնական հարաբերությունների ծավալման եւ կրոնների գործակցության վերաբերյալ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի անփոփոխ դիրքորոշումը պետք է գնահատել նաեւ Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի կրոնապետների 2003 թ. խաղաղարարական հանդիպման պարագային: Մեկ անգամ եւս հավաստելով, որ «մեր ժողովուրդներն ունեն դարավոր բարեկամություն»՝ Վեհափառ Հայրապետը մատնանշում է, որ «Այսօր մեր ժողովուրդների ձգտումն է կառուցել օրինահարգ հասարակություն եւ բարօր կյանք, **որը հնարավոր, իրական կարող է լինել նախ եւ առաջ խաղաղության պայմաններում հոգեւոր արժեքների կարեւորումով**: Սա է մեր հանդիպումների առաջնային նպատակը եւ մեր առաքելությունը մեր ժողովուրդների կյանքից ներս: **Խաղաղությունը կպահպանվի այն ժամանակ, երբ նրա հիմքում ընկած կլինի մեր ընդհանուր ձգտումը ստեղծարար կյանքի եւ վստահությունը ապագայի հանդեպ**»[22]: Գարեգին Բ. Կաթողիկոսը պնդում է, որ իբրեւ հոգեւոր առաջնորդներ իրենց «նպատակը պետք է լինի միայն պահպանել եւ զարգացնել այդ ուղղությամբ ձեռքբերումները եւ ոչ՝ հակառակը»: Նրա կողմից փաստվում է նաեւ, որ համագործակցության այդ ոգին միշտ չէ, որ պաշտպանվում է երկխոսության կողմերի միջեւ: Եւ այդ կապակցությամբ հռետորական հարցով դիմում է Կով-

20 Անդ, էջ 540:

21 Անդ, էջ 541: Փաստերը թույլ են տալիս պնդել, որ բանակցող հոգեւոր առաջնորդները հանուն «արդար խաղաղության» եւ «ընդունելի համաձայնության»՝ միջկրոնական համագործակցության եւ երկխոսության անհրաժեշտությունը առաջին հերթին տեսնում այն բանում, որ «Կրոնը իր գիտանոցում չունի քաղաքական, տնտեսական կամ ուժային միջոցներ՝ հակամարտության կողմերի վրա ազդելու համար: **Նրա զենքը եւ ուժը Բարձրյալ Արարչի օրհնությամբ սրբագործված խոսքն է, սիրո եւ ճշմարտության խոսքը**: Մեր բարեգութ եւ ողորմած Տերը խրատում է քրիստոնյաներին. «Խաղաղության մեջ եղեք բոլոր մարդկանց հետ», եւ կոչ է անում մուսուլմաններին. «Մարդիկ, խաղաղության մեջ մտեք». անդ:

22 Անդ, էջ 501:

կասի ժողովուրդների բարձրագույն կրոնական խորհրդի նախագահ եւ Ադրբեջանի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ Շեյխ-ուլ-Իսլամ Ալլահշուքյուր Փաշա-Զադեին. «Արդարեւ, դեպի ո՞ւր պիտի առաջնորդեն սպառնալի ու մարտաշունչ կոչերը, որ հնչում են այսօր Ադրբեջանի իշխանությունների ու քաղաքական շրջանակների կողմից եւ ցավոք, նաեւ՝ հարգարժան Շեյխի, ինչպես Կովկասի մահմեդականների երկրորդ համագումարում: «Եթե հայերը մտահոգ են իրենց ապագայով, եթե նրանք ցանկանում են մասնակից դառնալ առաջընթացին, զարգացմանը, բարեկեցության հասնել, ապա նրանք պետք է մտածեն նվաճելու իրենց հարեւանների վստահությունը եւ ոչ թե նրանց հողերը»: Մեկնաբանություններն ավելորդ են»[23]:

Կարծում ենք, որ միջկրոնական համագործակցության եւ երկխոսության վերաբերյալ խորապես հիմնավորված այդ դիրքորոշումը մեծապես նպաստեց խաղաղարարական հանդիպման համատեղ ուղերձում հավաստելու, որ չնայած խաղաղարար ջանքերին, Անդրկովկասում գործում են այնպիսի ուժեր, որոնք «մահ եւ ավերածություն են սփռում», իսկ ահաբեկիչները, ծայրահեղականներն ու քաղաքական արմատականները փորձում են ազգային եւ կրոնական տարբերություններն օգտագործել «ճշմարիտ կրոնների անհարիր» իրենց նպատակները հիմնավորելու համար: Այդ ֆոնի վրա կարեւորվեց հատկապես այն իրողությունը, որ «Կովկասի մուսուլման եւ քրիստոնյա կրոնական գործիչների խելամիտ դիրքորոշումը, տարածաշրջանում քրիստոնյա-մուսուլմանական երկխոսության առկայությունը թույլ չտվեցին, որ ազգամիջյան հակասությունները վերածվեն համընդհանուր քրիստոնեա-մուսուլմանական կոնֆլիկտի»[24]:

Բացում անգամներ կրոնների միջեւ երկխոսությանը եւ համագործակցությանը նվիրված հրապարակային ելույթներում Հայոց Հայրապետը հավաստել է այն հավատամքը, որ մարդկային կյանքն Աստծու պարգեւն է, որը պետք է սրբությամբ պահպանել: Վեհափառն անվարան պնդել է նաեւ, որ անվտանգ եւ ներդաշնակ զարգացող աշխարհակարգ կարելի է կառուցել միայն բարոյական այնպիսի հաստատուն հիմքի վրա, որն ի զորու կլինի համատեղելու, մեկտեղելու տարբեր շահերը,

23 Անդ, էջ 501-502: Վեհափառն իր պարտքն է համարում Ադրբեջանի մուսուլմանների հոգեւոր առաջնորդին պարգեւատրել նաեւ, որ «Արցախը իրականացնում է ինքնորոշման իր իրավունքը, որը ստրվածատուր շնորհ է, որն իրավական հարաբերությունների տեսանկյունից ամրագրված է ՄԱԿ-ի մարդու իրավունքների երկու հիմնարար փաստաթղթերում՝ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրում» եւ «Սոցիալական ու մշակութային իրավունքների համաձայնագրում»: Եւ եթե Դուք, հարգարժան Շեյխ, բնորոշում եք Ադրբեջանն «օրենք ու մարդու իրավունքներ հարգող երկիր», ապա պիտի ընդունեք, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն իր նախնիների հողի վրա ազատ ապրելու ստրվածաշնորհ իր իրավունքի տերն է». անդ, էջ 502:

24 Անդ, էջ 543: Միջկրոնական համագործակցության կարեւորությունը փաստող այս ուղերձում կողմերը մեկ անգամ եւս հավաստում են, որ անթույլատրելի է ցանկացած միջոցներով «թշնամու» դեմ պայքարը ներկայացնել որպես «սուրբ» գործ, քանի որ «**Ազգային եւ կրոնական իդեալների այդպիսի շահագործումը հաստատում է ամբողջատիրական-ազգայնամոլական գաղափարախոսության ոչ կրոնական էությունը**: Այն ծառայում է բոլոր այն ուժերի օգտին, որոնք փորձում են կրոնը դուրս մղել հասարակության կյանքից եւ անվստահություն սերմանել: **Հավատքի ճշմարիտ խոստովանությունը դրսևորում է ոչ թե թշնամության, ոչ թե կրոնական կամ ազգային հպարտության, այլ անձնազոհ սիրո, խաղաղարարության եւ բարիդրացիության**». անդ, էջ 544:

ապահովելու համամարդկային բնույթի որոշումների ընդունումը՝ հարգելով ազգային ու կրոնական տարբեր ավանդույթները:

Այդ տեսանկյունից բնութագրական է Լիոնի խաղաղության միջազգային համաժողովում Գարեգին Բ. Կաթողիկոսի այն պնդումը, որ «երկնքի ու երկրի խաղաղության որոնումները բնորոշ են բոլոր կրոններին»: Եւ այս պարագայում հարկ ենք համարում մեկ անգամ ևս փաստել, որ այդ մոտեցմամբ նա միջկրոնական հարաբերություններում մեծ կարեւորություն ունեցող խաղաղություն հաստատելու գործընթացում շեշտադրում է փոխհասկացողության, հավասարության, արդարության եւ անշահախնդրության հրամայականը: Միաժամանակ, Վեհափառի կողմից վերը նշված գործոններին առաջնային նշանակություն է վերագրվում նաեւ ինչպես ազգամիջյան հարաբերություններում խաղաղություն հաստատելու, այնպես էլ՝ ժողովուրդների միջեւ դրացիական կապերի ամրապնդման գործում: Հայոց Հայրապետն այդ գործընթացների բնականոն ծավալման գործում հավասարապես կարեւորում է ինչպես նյութական, այնպես եւ հոգեւոր գործոնների փոխկապակցվածության դերը: Այդ փաստն է վկայում Վեհաժողովում Գարեգին Բ. Կաթողիկոսի բարձրաձայնած այն պնդումը, որ «Արդի ժամանակների ընթացքների մեջ ամեն բան դարձել ու դառնում է այնքան փոխշաղկապված, որ իրականում ճիշտ է ասելը, թե փոքրանում է երկիր մոլորակը՝ այն առումով, որ նրա որեւէ անկյունում կատարվող որեւէ իրադարձություն արձագանքվում է այլ տեղերում: **Համընդհանուր մտահոգության ու համընդհանուր ջանքերի կարիքն է զգացվում բարեկարգելու համար մեր ընդհանուր տունը, որպեսզի այնտեղ տիրապետողը եւ դեպի կարգավորումներ առաջնորդողը լինի խաղաղությունը: Խաղաղության մեջ Աստծո օրհնությունն է, կյանքի առաջընթացն ու երջանկությունը, խաղաղության մեջ հույսն է գալիքի**»[25]:

Ինչ վերաբերում է դեպի խաղաղություն տանող գործընթացում հոգեւոր գործոնների դերին, ապա այս պարագայում ևս Հայոց Հայրապետի համար անփոփոխ ելակետը աստվածասիրության հավատամքն է, որի վկայությունն է Գարեգին Բ. Կաթողիկոսի հետեւյալ պնդումը. «Քրիստոնյաներիս համար խաղաղության կոչել՝ նշանակում է վկայել Քրիստոսին: Մեր Տիրոջ ու Փրկչի պատգամն է՝ «Խաղաղութիւն արարէք ընդ միմեանս» (Մարկ. Թ. 49): **Աստվածսիրություն է խաղաղություն գործելը եւ խաղաղություն կերտելը: Առ Աստված մեր հավատի դրսեւորումն են խաղաղությանն ուղղված մեր քայլերը, քանզի հավատն ինքը մարդու խաղաղության ուխտն է Աստծո հետ: Աստծո հետ հաշտ հոգու խորհուրդը՝ սերն ու հաշտությունն է մարդկանց հետ, ու նրա պտուղը՝ գործը հանուն մարդու ու հանուն կյանքի: Եթե հավատ ունենք, ուրեմն նաեւ՝ պարտականություն խաղաղարար լինելու՝ արդարություն գործելով, իրավունք պաշտպանելով, բարին ընտրելով, ուսուցանելով, եւ այս ճանապարհին բոլոր գործերը մեծ են**»[26]:

25 Անդ, էջ 515:

26 Անդ, էջ 515: Վեհափառը միաժամանակ զգուշացնելով ծայրահեղություններից, պնդում է. «Ազատութ-

Փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Գարեգին Բ. Հայրապետը հանուն խաղաղ զոյակցության միջկրոնական երկխոսության եւ համագործակցության ոլորտի «մեծ գործերի» անբաժան տարրերից է համարում **մշակութային երկխոսությունը եւ գործակցությունը**: Նա վստահ է, որ քաղաքական, ազգային եւ կրոնական հողի վրա կատարվող բռնություններին հակազդելը, արդիականության գլխավոր մարտահրավերներից մեկի՝ կրոնը անհանդուրժողականություն սերմանելու եւ մարդկանց դեմ ոտնձգություն կատարելու համար օգտագործելու անթույլատրելի փորձերի դեմ պայքարը արդյունավետ չի կարող լինել, եթե զանց առնվի **բարոյական դաստիարակության, կրոնական եւ ազգային ինքնության կարեւորագույն ցուցիչներից մեկը՝ ազգամշակութային առանձնահատկությունները**: Ուստի միանգամայն բնական պետք է համարել այն, որ Մոսկվայի 2003 թ. խաղաղարարական հանդիպման ուղերձում կարեւորվում է նաեւ ավանդական կրոնների ավանդույթներին հոգեհարազատ մշակութային գործակցության հիմնահարցը: Դրանով պետք է բացատրել նաեւ Վեհափառի ստորագրությամբ վավերացված ուղերձում ամրագրված այն պահանջը, որ կրոնների երկխոսության պարտադիր պայմաններից մեկը պետք է լինի «...ազգային մշակութային ժառանգությունը, հատկապես ապրվածպաշտության վայրերը, սրբավայրերը եւ գերեզմանները պահպանելու» հրամայականը[27]:

Այն, թե աշխարհում առկա կրոնական տարաձայնությունները եւ քաղաքակրթական հակամարտությունները հաղթահարելու գործընթացներում ինչպիսին է Գարեգին Բ. Վեհափառի գործակցական դերը, ինչպես նաեւ այն, թե նրա գործունեության ոլորտում առաջնահերթ ինչ տեղ է հատկացվել կրոնների եւ կրոնական

յան քրիստոնեական ընթռնումը, այնուամենայնիվ, ամենաթողությունը չէ, այլ հավատարմությունը Տիրոջով օրհնված ընթացքներին: Եւրոպական սահմանադրությունը նույնպես պիտի արտահայտի քրիստոնեական ճանաչողությունն ու ընթռնումները: Եւրոպան քրիստոնեական հավատի ու մշակույթի կրողն ու վկայողն է եւ պահպանողը ազատության, իրավունքի ու մարդասիրության այն արժեքների, որոնց համար պայքարել է ու զոհողություններ կրել» եւ ընդհանրացնելով պնդում է, որ միջկրոնական հարաբերությունների ծիրում բոլոր կրոնները «առաքելություն ունեն փնտրելու խաղաղությունը մարդկանց մեջ». մանրամասները տե՛ս անդ, էջ 515, 516:

27 Տե՛ս անդ, էջ 546: Այդ եզրակացության փաստական հիմքերն ավելի քան բավարար են: Այսպես, մոսկովյան հանդիպման հոգեւոր առաջնորդներին հղված խոսքում Գարեգին Բ. Կաթողիկոսը փաստում է. «Վերջին շրջանում, ցավոք, տեղ գտան երեւույթներ, որոնք վտանգում են փոխվստահությունը եւ փխրուն խաղաղությունը տարածաշրջանում: **Իբրեւ Հայոց Հայրապետ, ցավով կուզենք անդրադառնալ, որ քանդվել ու ոչնչացվել են ներկայիս Ադրբեջանի՝ Նախիջեւանի Ինքնավար Մարզի տարածքում գտնվող հայկական Ջուղա քաղաքի գերեզմանատան հազարավոր հուշարձանները՝ վաղ քրիստոնեական մշակույթի հնագույն եզակի արժեքներ**: Մենք հեռու ենք այն մտքից, որ այս եւ նմանատիպ այլ քայլերը արտահայտում են ադրբեջանական ժողովրդի ձգտումները: ...**Ներեւաբար, մշակութային արժեքների հանդեպ վանդալիզմի այս դրսեւորումները պիտի գնահատվեն իբրեւ անհեռատես քաղաքականություն կամ անպատասխանատու թողտվություն**, ինչը միայն վնաս կարող է բերել հարեւանությամբ ապրող մեր ժողովուրդների փոխհասկացողությանն ու բարեկամության հասնելու առանց այն էլ դժվարին ճանապարհին: **Մեծ էր մեր տարակուսանքը, երբ, ի պատասխան Մեր ահազանգի, հարգարժան Շեյխի պատասխան գրությամբ կապված հայտնվեց այդ հուշարձանների պատկանելության մասին, իսկ դրանց նկատմամբ բարբարոս վերաբերմունքը համարվեց լրատվական անճշտություն: Կցանկանայինք, որ իրապես անճշտություն լինեին այդ տեղեկությունները, բայց ունենք հակառակը վկայող ցավալի եւ անհերքելի փաստեր**». անդ, էջ 503:

առաջնորդների հետ փոխըմբռնման եւ երկխոսության հարցերին, կարելի է դատել ոչ միայն միջազգային տարբեր ատյաններում նրա ելույթներից, այլեւ՝ կազմակերպչական ակտիվ գործունեության փաստերից: Այդ համատեքստում արժանին պետք է մատուցել ԱՊՀ Միջկրոնական խորհուրդ ստեղծելու գործում Վեհափառի ներդրած ջանքերին: Այդ պնդման վկայությունը ԱՊՀ Միջկրոնական խորհուրդ ստեղծելու մասին հայտարարությունն է, որը հավաստում է, որ կառույցն ստեղծվել է «բարձր գնահատելով միջկրոնական երկխոսության» դերը, «միջկրոնական համագործակցության բազմադարյա ավանդույթները», ինչպես նաեւ՝ «կրոնների միջեւ փոխըմբռնում եւ միջկրոնական համատեղ գործունեություն» ծավալելու առաջնահերթությունը: Բնութագրական եւ մեծարժեք է այն հավաստումը, թե նշված գործընթացներում իր գործունեությամբ մեծ դերակատարություն է ունեցել ԱՊՀ Միջկրոնական խորհրդի ստեղծման հիմնադիր ակտիվ անդամներից մեկը՝ Հայ Եկեղեցին՝ հանձին Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի[28]:

Գարեգին Բ. Կաթողիկոսի կողմից կրոնների եւ կրոնական առաջնորդների փոխըմբռնման եւ համատեղ գործունեության վրա հենված ազգամիջյան եւ միջկրոնական արդյունավետ համագործակցության նշանակությունը եւ խաղաղություն հաստատելու առաջնահերթությունը կարեւորվում է այլ տեսանկյուններից եւս: Այդ փաստի վկայությունն է Կաթոլիկ Եկեղեցու Լիոնի Արքեպիսկոպոսարանի եւ Սուրբ Էջիդիո համայնքի կողմից խաղաղությանը նվիրված միջազգային «Le Courage d'un Humanisme de Paix» 19-րդ համաժողովում Վեհափառի այն հայտարարությունը, թե «Բոլոր կրոնները փնտրում են խաղաղությունը երկնքի ու երկրի: Եւ առաքելություն ունեն փնտրելու խաղաղությունը մարդկանց մեջ: Սուրբ Էջիդիոյի աղոթաժողովի ծնունդից ի վեր շատ իրավիճակներ են փոխվել՝ մանավանդ առաջնորդելով դեպի պետությունների նոր հարաբերություններ ու ավելի սերտ համագործակցություն: Սակայն այսօր էլ աշխարհը հուզում են միջպետական, ազգային ու կրոնական հակասություններ, տագնապներ են հնչում, բոթեր են լսվում բռնությունների, ահաբեկչության եւ արյունահեղությունների: Այսօր էլ աղքատության, օրինազանցության, իրավունքի ոտնահարման եւ այլ չարիքներ խռովում են հասարակությունների կյան-

28 ԱՊՀ Միջկրոնական խորհուրդը ստեղծվել է 2004 թ. մարտին տարածաշրջանի ավանդական (քրիստոնեություն, իսլամ, հուդայականություն եւ բուդդայականություն) 4 կրոնները ներկայացնող 23 հոգեւոր առաջնորդների համատեղ գործունեության եւ փոխադարձ համաձայնության արդյունքում: ԱՊՀ Միջկրոնական խորհրդի նպատակներ են հռչակված՝ ա) ԱՊՀ երկրների ավանդական կրոնական կազմակերպությունների գործունեության համակարգումը ազգամիջյան եւ միջկրոնական խաղաղության ամրապնդման, հասարակության մեջ համերաշխություն եւ կայունություն ձեռք բերելու, հոգեւոր առաջնորդների միջեւ երկխոսություն զարգացնելու, ընդհանուր մարտահրավերների դեմ պայքարում ջանքերը միավորելու, հասարակության մեջ ավանդական հոգեւոր արժեքները հաստատելու առաջնահերթությունները, բ) հոգեւոր առաջնորդների եւ կրոնական համայնքների միջեւ հարաբերությունների ամրապնդման ճանապարհով ԱՊՀ անդամ երկրների համագործակցությանն աջակցության ձեռք բերումը եւ գ) ԱՊՀ միջկրոնական խորհրդի ջանքերը պետությունների եւ ժողովուրդների, տարբեր կրոնների հետեւող բոլոր հայրենակիցների, հավատացյալ եւ ոչ հավատացյալ մարդկանց բարօրության գործին ուղղորդելը. մանրամասները տե՛ս անդ, էջ 547-548:

քը, առկա են առողջապահական, բնապահպանական եւ այլ խնդիրներ, որոնք պահանջում են անհետաձգելի վճիռներ ու միասնական մոտեցումներ»[29]:

Միջկրոնական երկխոսության եւ համագործակցության գործընթացներում հավաստելով մարդկային կյանքի բարձրագույն արժեքը պահպանելու անհրաժեշտությունը՝ *այդ հիմնախնդիրների իրագործումը Վեհափառը սերտորեն շաղկապում է մեկ այլ՝ խաղաղության պահպանման առաջնահերթության հետ: Այդ մոտեցումը նա բացատրում է նրանով, որ խաղաղությունն այն գլխավոր արժեքն է, որի պայմաններում միայն բնականոն կերպով կարող է գործառել բանական եւ բարոյական բարձրագույն անհատականություն մարդը: Ահա թե ինչու այդ ամենի խորն ընկալմամբ Գարեգին Բ. Կաթողիկոսը կոչ է անում ուժեղացնել կրոնների խաղաղասիրական ջանքերը եւ առաքելությունը: Ընդ որում, համալիր մոտեցմամբ նա այդ գործընթացում հավասարապես կարեւորում է եւ միջազգային իրավունքի, եւ տարբեր պետությունների խաղաղարարական փորձի, եւ զանգվածային լրատվամիջոցների ազդեցության զուգորդության անհրաժեշտությունը: Եւ խաղաղության պահպանման այդ լծակների կողքին, որպես հասարակության համար կառուցողական եւ կենսունակ ուժի, առանձնահատուկ կարեւորություն է վերապահում նաեւ միջկրոնական երկխոսություններին: Այդ ամենով է բացատրվում նաեւ, որ խաղաղությանը նվիրված միջազգային համաժողովում Վեհափառը մեկ անգամ եւս այդ հիմնահարցերի լուծման գործում շեշտադրելով համակարգված մոտեցման անհրաժեշտությունը՝ հավաստում է.* «**Մեզ համար ուրախություն է խոսք ուղղել այս հավաքին, որի նպատակը հավատարմությունն է խաղաղության ճանապարհներին: Արդարեւ, մարդկության պատմության մեջ հաճախ են մոլորվել խաղաղության ճանապարհները, բայց եղել ու մնում են ձգտումը բոլոր ժողովուրդների**: *Այդ մասին է վկայում նաեւ միջկրոնական այս աղոթաժողովը, որ նախաձեռնությամբ Սուրբ Էջիդիո համայնքի, երկու տասնամյակ համախմբում է տարբեր կրոնների ու ազգերի ներկայացուցիչների*»[30]:

Ճիշտ է, Գարեգին Բ. Վեհափառը համոզված է, որ «խաղաղության շիվերով ընձյուղված համերաշխ կյանքի եւ համագործակցության ուղիները հեշտընթաց չեն», սակայն վստահ է, որ դա կարող է միանգամայն շոշափելի իրականություն

29 Անդ, էջ 515:

30 Անդ, էջ 514: Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Աստանայում 2006 թ. կայացած Ավանդական եւ Համաշխարհային կրոնների կրոնապետերների երկրորդ համագումարում Գարեգին Բ. Հայրապետը հերթական անգամ հոչակելով երկխոսության կարեւորությունը՝ պնդում է. «Այս հավաքը, որ մեզ համախմբել է, ...չափազանց կարեւոր է. **մեզ հերթական հնարավորություն է ներկայացել երկխոսության միջոցով միասնաբար ընդունել եւ պատասխաններ որոնել մեր ժամանակի բազում հարցերի, որ հուզում են մեզ եւ մեր ժողովուրդներին**: Համաշխարհային եւ ավանդական կրոնների հոգեւոր առաջնորդների երկրորդ համագումարը կարեւոր քայլ է հազարամյակների խաչմերուկում կրոնների առջեւ ծառացած մարտահրավերները համատեղ հաղթահարելու ճանապարհին». անդ, էջ 510:

դառնալ փոխադարձ հարգանքի վրա հենված միջկրոնական երկխոսությունների արմատավորման պարագայում: Այլ կերպ ասած՝ նա լիահույս է, որ դավանական անհանդուրժողականությունն արմատապես մերժող, ազնիվ, հանդուրժողական, փոխադարձ հարգանքի եւ հավասարության վրա հենված կրոնների երկխոսությունը պետք է նպաստի ազգերի խաղաղ գոյակցությանը եւ արդյունավետ համագործակցությանը: Այդ վստահությունն արտացոլված է նաեւ Վեհափառի հետեւյալ պնդման մեջ. «**Հավատը, որ ունենք առ Աստված, պիտի օգնի մարդկության կյանքի նորոգմանը իր ճշմարիտ բնության, կոչման ու նպատակի մեջ՝ ընթանալու դեպի Աստված, որպեսզի Երկնքի արքայությունը հաստատվի այս աշխարհում**: *Այս է մեր դավանանքն ու քարոզությունը: Ժամանակները փոփոխվել ու փոփոխվելու են, շարունակ աճելու են մարդու գիտելիքներն ու հնարավորությունները, եւ միշտ արդիական է լինելու անհրաժեշտությունը, որպեսզի գերական ու վերահսկողը լինի հասարակական գիտակցությունը, որի ակունքը նրա հոգեւոր-բարոյական սկիզբն է:* **Մենք բոլորս Տիրոջ տանն ենք ապրում, եւ մենք չէ, որ հաստատել ենք կյանքը, բայց մենք գործակիցներն ենք Արարչի, որպեսզի այն ծաղկի, լեցուն լինի ուրախությամբ ու պայծառությամբ**: **Արդ, տարբեր ժողովուրդներ, տարբեր մարդիկ, բայց մեկ Աստծո զավակներն ենք՝ կոչված միմյանց հանդեպ խաղաղություն գործելու**»[31]:

Եւ քանի որ Վեհափառը համոզված է՝ բոլոր մարդիկ «միմյանց հանդեպ խաղաղություն գործելու կոչված մեկ Աստծու զավակներն են», ապա միանգամայն օրինաչափ պետք է համարել նաեւ նրա այն պնդումը, որ կրոնական երկխոսությունն ու գործակցությունը այլընտրանք չունեն: Հայոց Հայրապետը վերոնշյալ գործընթացում մեծապես կարեւորում է նաեւ «Արարչի գործակից կրոնական գործիչների» առաքելությունը, որը, նրա համոզմամբ, պետք է դրսեւորվի այնպիսի գործակցության տեսքով, երբ նրանց ջանքերով տարբեր դավանանք ունեցող մարդկանց մեջ հաստատվում են անփոփոխ բարոյական արժեքները: Եւ քանի որ Գարեգին Բ. Հայրապետի համար ելակետային է այն համոզմունքը, որ հավիտենական ու անփոփոխ բարոյական արժեքները տրված են Բարձրյալի կողմից, դրանով էլ նա բացատրում է այն փաստը, որ այդ արժեքները, որպես կանոն, հիմնականում նույնն են բոլոր կրոններում: Այդ մոտեցումը նա մանրամասնում է հետեւյալ հավաստմամբ. «Հոչակելով մեր ժողովուրդների նպատակները՝ մենք բոլորս պետք է հաստատենք, որ դրանք ձգտում են ուղիներ գտնելու նրանց առջեւ ծառացած խնդիրների հաղթահարմանը, ուղիներ, որոնք տանում են եղբայրությամբ եւ համաձայնությամբ ընդհանուր խաղաղ կյանքի ապահովմանը: Եւ այդ նպատակով հավատքի մարդիկ պետք է անսասան մնան իրենց վեհ գաղափարների նվիրվածությանը, որպեսզի մարդկությունը զարգանա հումանիտար այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են արդարությունը,

31 Անդ, էջ 515-516:

փոխադարձ հարգանքը, ազնվությունը՝ արժեքներ, որոնք ընկած են հասարակական կյանքի հիմքում: Եւ թող Աստծու Հովանավոր Աջը լինի բոլոր ազգերի վրա, եւ Տերը թող օրհնի մարդկային բոլոր ուժերը խաղաղության հաստատման եւ մարդկանց բարօրության համար այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից»[32]:

Այդ ամենը վկայում են, որ խաղաղության պաշտպանության գործում կրոնների դերի գնահատմանը Վեհափառ Հայրապետն անդրադառնում է «Աստծու հետ հաշտ հոգու խորհրդի՝ սիրո եւ հաշտության» կարեւորության գիտակցումով: Նա միաժամանակ հավատում է կրոնների խաղաղարար դերի հանդեպ պատասխանատվությունը հասարակության եւ մարդու կյանքում, ինչպես նաեւ՝ հասարակական կյանքի բարոյական տարբեր հիմնախնդիրների լուծման գործում: Նրա համար աներկբա է, որ այդ ոլորտում առաջադրված լուծումները չեն կարող միաբեւեռ լինել եւ պետք է համապատասխանեն երկխոսության մասնակից բոլոր կողմերի շահերին: Այդ ամենի ընդհանրացումն է Վեհափառի այն պնդումը, թե «**Ներքինթաց չեն խաղաղության ճանապարհները, բայց միշտ հնարավոր, եթե ճշմարտապես ունենք խաղաղության ձգտումը: Արդարությունը, միմյանց ազատությունն ու իրավունքը ճանաչելու եւ հարգելու հիմքերի վրա կարող է կառուցվել խաղաղությունը եւ իրականում բարի արդյունքներ բերել՝ իբրեւ ճշմարիտ մարդասիրության արժեք ու արտահայտություն**»[33]: Եւ քանի որ Հայոց Հայրապետը լիահույս է, թե հանուն հասարակության, անհատների ազատության եւ իրավունքի համատեղ պայքարը նաեւ ատրվածային սիրո հաստատումն է կյանքում եւ ազգամիջյան հարաբերություններում, հիմնավորում է նաեւ այն տեսակետը, որ հասարակական կյանքում «ատրվածային սիրո հաստատումը» համընդհանուր բարիքի կծառայի միայն օրինականության հաստատման եւ փոխըմբռնման պարագայում: Ահա թե ինչու նա պնդում է, որ «**Դժվարությամբ՝ տեւական ջանքով, համոզումով ու նվիրումով են նաեւ միջազգային օրենսդրական դաշտում ամրագրվել ու կյանքի կոչվել մարդու եւ ազգերի ազատության ու իրավունքի նորմերը**, *որպեսզի ծառայեն համընդհանուր բարիքին, ողջ մարդկության խաղաղ ու ստեղծագործ կյանքի հույսերին ու նոր օրվան:* **Ձեռք ձեռքի են ազատությունն ու արդարությունը, սերն ու խաղաղությունը, միմյանցով զորացող եւ Աստծուն հաճելի**. *«Այն, ինչ անում է Տերը, արդարությամբ է ու ճշմարտությամբ», իսկ «Եթե Տերը տունը չշինի, իզուր են չարչարվում այն շինողները» (Սղմ. ՂԶ. 11, ՃԻԶ. 1)*»[34]:

32 Անդ, էջ 509:

33 Անդ, էջ 516:

34 Անդ: Այդ դիրքերից անդրադառնալով Անդրկովկասում տիրող իրավիճակի գնահատմանը՝ Վեհափառը պարածաշրջանում արդարություն, սեր եւ խաղաղություն հաստատելու գործում հերթական անգամ կարեւորում է կրոնական համագործակցության դերը եւ պնդում է. «...պարածաշրջանային անկայունությունը, առկա քաղաքական բարդ իրավիճակները, բարոյական արժեքների նահանջը հասարակական կյանքում եւ անցումային շրջանի բազմաթիվ դժվարություններն առաջադրում են հրամայականներ, որոնց պետք է արձագանքեն նաեւ հոգեւոր մեր հաստատությունները: Իհարկե, յուրաքանչյուրս առանձնաբար մեր կարելին ի գործ ենք դնում դիմակայելու ներկա ժամանակների առաջադրած մարտահրավերներին, սակայն առանձին

Հակառակ պարագայում, պնդում է նա, ինչպես պատմական փորձն է ցույց տալիս, կրոնը կարող է ծայրահեղականների եւ արմատականների ձեռքում վերածվել ատելություն եւ թշնամանք սերմանող վտանգավոր զենքի: Ահա թե ինչու միջազգային մեկ այլ՝ Մոսկվայի 2006 թ. Կրոնական առաջնորդների գագաթնաժողովում Գարեգին Բ. Վեհափառն իր մտահոգությունն արտահայտելով ահաբեկչության եւ կրոնական անհանդուրժողականության արտաքին դրսեւորումների կապի մասին՝ հայտարարում է. «**Մենք չենք կարող արհամարհել այն իրողությունը, որ ահաբեկչությունն այժմ ձեռք է բերում նոր երանգներ՝ ներխուժելով նաեւ մշակույթի ոլորտ**: Վերջին ամիսներին մենք վկաները դարձանք մարդկանց կրոնական զգացմունքների վիրավորման, ինչն էլ անհանդուրժելի է եւ վտանգավոր երեւույթ: **Ահաբեկչության եւ ազգային կրոնական անհանդուրժողականության դեմ պայքարում անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր, որոնք կկանխեն հոգեւոր մշակութային վանդալիզմի դեպքերը, որոնք արդյունք են ազգային ատելության**»[35]:

Հոչակելով, որ ասրվածապարգեւ ազատությունը թանկ է բոլորի համար, իսկ անհանդուրժողականությունն ու ծայրահեղականությունը ուղղված են կրոնների բնական եւ անհերքելի իրավունքների դեմ՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը Ասրանայում Ավանդական եւ Համաշխարհային կրոնների կրոնապետների երկրորդ համագումարում ողջունում է նման համաժողովների հրավիրումը, քանի որ վստահ է, որ կրոնների միջեւ ծավալվող նման ընդհանրական քննարկումները «...ծառայում են նաեւ կրոնների ներկայացուցիչների միջեւ անմիջական կապերի, շփման եւ փոխըմբռնման, հարգանքի եւ համագործակցության ոգու հաստատմանը»[36]: Եւ մեկ անգամ եւս մասնակիցների ուշադրությունը հրավիրում է այն բանին, որ «...մեր հասարակությունները բախվում են 21-րդ դարի նոր մարտահրավերների: Մենք հաճախ ականատես ենք դառնում քաղաքական եւ տնտեսական խնդիրները, ազգամիջյան հակամարտությունները եւ տարաձայնությունները կրոնական լույսի ներքո ներկայացնելու միտումի: Դրանում նվազ չէ նաեւ մամուլի, հեռուստատեսության եւ զանգվածային այլ լրատվամիջոցների ազդեցությունը, որոնք, երբեմն անգամ տեղյակ չլինելով հակամարտությունների էությանը, փորձում են պարզապես այդ խնդիրները փոխադրել կրոնական դաշտ»[37]: Նա վստահ է, որ այդ գործընթացները անշրջելի կարող են

երեւույթների պարագային... անհրաժեշտ են մեր համատեղ ջանքերը». անդ, էջ 503-504:

35 Անդ, էջ 508: Անդրադառնալով Ջուղայի գերեզմանատան հազարավոր խաչքարերի բարբարոսական ոչնչացմանը՝ Գարեգին Բ. Հայրապետը պնդում է. «Մշակութային եղեռնի նման երեւույթը, նաեւ հայոց գերեզմանների պղծումը երբեք չի կարող նպաստել մեր ժողովուրդների բարի կամեցողության ու խաղաղասիրության ոգու զորացմանը: Որտեղ էլ լինի՝ Ադրբեջանում կամ այլուր, երբ չկա հարգանքը միմյանց մշակութային արժեքների ու սրբությունների հանդեպ, ինչպե՞ս կարող ենք հուսալ խաղաղ կյանքի, բարի հարաբերությունների մասին, որ պիտի կառուցվեն ոչ թե վիրավորանքների ու սպառնալիքների, այլ նախ եւ առաջ փոխադարձ հարգանքի ու փոխհասկացողության վրա». անդ, էջ 503:

36 Անդ, էջ 512-513:

37 Անդ, էջ 511: Բաքվի 2010 թ. Կրոնապետերների համաշխարհային գագաթնաժողովում ողջունելով քննարկումներ կազմակերպելու նախաձեռնությունը՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը կարեւորել է հատկապես քննարկումները «...համաշխարհայնացման, կրոնի, ավանդական արժեքների վերաբերյալ հարցերը, եւ այս

դառնալ միայն ամենաթողության պայմաններում: Եւ հիմնահարցի լուծման բանալի է համարում այդ ամենի դեմ ուղղված համատեղ գործունեություն ծավալելու եւ պայմանավորվածություններ ձեռք բերելու առաջնահերթությունը: Բայց նաեւ հավելում է, որ կրոնների համագործակցության ոլորտում իսպառ պետք է բացառել դավանաբանական եւ բարոյահոգեբանական հակադրության ամեն մի փորձ, ինչպես նաեւ՝ հավատացյալների վրա ազդելու քարոզչական ցանկացած միակողմանի աշխատանք: Իսկ դա հավաստում է, որ Գարեգին Բ. Վեհափառը կողմնակից է կրոնների այնպիսի համագործակցության, որը կառուցված է փոխադարձ հարգանքի եւ բարի կամեցողության վրա՝ հանուն խաղաղության եւ բարեկեցության: Այդ ամենը կարելի է վկայել Հայոց Կաթողիկոսի հետեւյալ հավաստմամբ. «Մենք կոչված ենք համախմբել մեր ուժերը, որ տնտեսական, քաղաքական, մշակութային եւ գիտատեխնիկական առաջընթացը չծառայի գաղափարական բռնության տարածման ծավալմանը, օտարատյացությանը, ահաբեկչության եւ սպառազինության մրցավազքին: Մենք չենք կարող անտարբեր նայել ոչ աստվածահաճո փորձերին՝ կլոնավորմանը, էվտանազիայի կիրառմանը, եւ ընդհանրապես հասարակության անբարոյականացմանը: **Մեր առջեւ խնդիր է դրված ուժերը ուղղել մարդկանց սրտերում եւ հասարակական կյանքում աստվածճանաչողության, հավատքի, սիրո եւ հոգեւոր արժեքների հաստատմանը, առանց որոնց ոչ մի հասարակություն չի կարող պայքարել եւ բնականոն զարգանալ արժանապատիվ եւ երջանիկ կյանքով ապրելու համար**»[38]: Վեհափառը միաժամանակ փաստում է մեկ այլ իրողություն եւս, այն, որ մեր օրերում համայն մարդկությանը հուզող կարեւորագույն այնպիսի հարցեր, ինչպիսիք են ահաբեկչությունը, բռնությունը, կյանքի արժեքների նկատմամբ քամահրական վերաբերմունքը, հասարակության մեջ կրոնի դերի անտեսումը եւ այլ խնդիրներ հասարակական կյանքից կարելի է արմատախիլ անել միայն համընդհանուր դատապարտության ճանապարհով: Այդ փաստի վկայությունն է Վեհափառ Հայրապետի հետեւյալ պնդումը. «Մենք պետք է խոստովանենք,

---

շրջանակներում անդրադառնալու մշակույթների եւ կրոնների երկխոսության, ինչպես եւ՝ աշխարհի արդար ու խաղաղ ընթացքը խաթարող վտանգները հաղթահարելու խնդիրներին: Մեր սրբազան պարտականությունն է ամեն ջանք, ուժ եւ եռանդ բերել պատերազմների եւ ահաբեկչությունների դադարեցման, աղքատության եւ դրանից բխող սոցիալական խնդիրների վերացման ուղղությամբ՝ հանուն մարդկության ապահով, բարօր ու խաղաղ կյանքի, ինչը կամենում է նաեւ Աստված, որովհետեւ, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, «Աստված խռովության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության» (Ա. Կորնթ. ԺԴ. 33)». «Էջմիածին», 2010, Դ., էջ 28:

38 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 508-509: Աստանայի համագումարում Գարեգին Բ. Կաթողիկոսը պնդում է մեկ այլ իրողություն եւս. «Հաճախ ականատես ենք դառնում կրոնական զգացումները վիրավորելու փաստերի եւ շարունակում ենք չմիջամտելով հարեւանցի անտարբեր դիտել, թե ինչպես են սրբապղծվում սրբավայրերը, բարբարոսաբար ոչնչացվում ինչպես կրոնական, այնպես էլ ընդհանուր մշակութային եւ համամարդկային նշանակություն ունեցող արժեքներ սոսկ այն պատճառով, որ ստեղծվել են ավանդական որեւէ դավանանքի պատկանող մի այլ ժողովրդի կողմից: Հրապարակ ենք համարում դիմել կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներին, գրականության եւ արվեստի գործիչներին, համաշխարհային լրատվամիջոցներին, բոլորին, ովքեր կարող են իրենց խոսքով ու գործերով նպաստել սիրո, բարեկամության հաստատմանը եւ կոչել բոլորին իրենց ջանքերն ուղղել միմյանց արժեքների եւ տարբեր կրոնների ներկայացուցիչների կրոնական զգացումների նկատմամբ հանդուրժողականության եւ հարգանքի քարոզչությանը». անդ, էջ 511:

որ մինչեւ մեր կողմից չեն դատապարտվի բոլոր պատմական չարագործությունները մարդկանց ու ազգերի նկատմամբ, ավերածություններն ու ցեղասպանությունները, մենք կշարունակենք մնալ դրանց կրկնության վտանգի առջեւ, ինչի վկաներն էլ մենք հաճախ դառնում ենք եւ այսօր»[39]:

Խաղաղ գոյակցության, հոգեւոր եւ մշակութային արժեքների նկատմամբ փոխադարձ հարգալից վերաբերմունք ձեւավորելու գործում կրոնների երկխոսության դերի գնահատման մեկ այլ օրինակ է Բաքվում կայացած Կրոնապետների համաշխարհային գագաթնաժողովում Գարեգին Բ. Կաթողիկոսի հետեւյալ հավաստումը. «Գոհություն ենք մատուցում Տիրոջը, որ բարի կամքի վկայությամբ Մենք՝ կրոնական առաջնորդներս, համախմբվել ենք միասնաբար խորհելու եւ համագործակցության ուղիներ փնտրելու արդի աշխարհում հոգեւոր արժեքների պահպանության ու ամրապնդմանն ի խնդիր եւ սիրո, համերաշխության ու համագործակցության մեր կոչն ուղղելու մեր ժողովուրդներին եւ ողջ աշխարհին՝ հանուն մարդկությանը հուզող ներկա կյանքի մարտահրավերների եւ հիմնախնդիրների հաղթահարման»[40]:

Համոզված, որ **արդի հասարակական կյանքում միջկրոնական երկխոսությունները դրսեւորվում են որպես ընդհանրական կարծիք ձեւավորելու եւ միասնացման գործոն**, Գարեգին Բ Հայրապետը մատնանշում է նաեւ կենսական այն ոլորտները (երկրագնդի «թեժ կետերի» հակամարտությունների կարգավորում, միջուկային պատերազմի եւ զանգվածային ոչնչացման զենքերի տարածման կանխարգելում, ապարտհեյդի, ռասայական եւ ազգային խտրականության վերացում, բնապահպանական հիմնախնդիրների լուծում եւ այլն), որոնք «համընդհանուր հոգածության ու միացյալ ջանքերի» կարիք ունեն: Եւ բարձրաձայնելով այդ ամենի մասին Բաքվի գագաթնաժողովում՝ նա շեշտում է. «Մեր օրերում շարունակ առավել մեծ շրջագիծ ընդգրկող հաղորդակցության եւ համագործակցության գործընթացները քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, կրթամշակութային ու այլ ասպարեզներում եւ ժողովուրդների մեջ մշտապես սերտացող առնչություններն ու կապերը, **ցավոք, դեռ չեն գծագրում հեռանկարը այնպիսի աշխարհի, ուր թագավորում է մարդասիրությունը, արդարությունը, աստվածադիր պատվիրանն ու օրենքը, ուր գերագույն արժեք է մարդը, եւ հարգվում է նրա իրավունքը**: Այսօր համընդհանուր մտահոգություն են տեխնոլոգիական փորձարկումների, մթնոլորտային արտանետումների արդյունքում առաջ եկող կլիմայական եւ բնապահպանական խնդիրները, որ վկայում են արարչաստեղծ աշխարհի հանդեպ մարդկային հարգանքի եւ հոգածության պակասի մասին: Բազմահազար մարդկանց ապահովությունն ու կյանքը վտանգում են ահաբեկչությունը, միջպետական եւ տարածաշրջանային հակամարտությունները, ազգամիջյան բախումները: Հավելյալ սպառնալիքներ են**

39 Անդ, էջ 508:
40 «Էջմիածին», 2010, Դ., էջ 28:

ստեղծում տեղեկատվական սադրանքները եւ կրոնական գործոնի շահարկումը՝ խեղաթյուրված փաստերով եւ հավատացյալների կրոնական գիտակցության խաթարումով առավել բորբոքելով աղետների եւ բախումների կրակը եւ առիթ ծառայում մշակութային արժեքների ոչնչացման համար»[41]: Քաջ գիտակցելով, որ հասարակական կյանքի բնականոն ընթացքը խաթարող բացասական այդ երեւույթների հաղթահարումը ամենեւին էլ պարզ գործընթաց չէ՝ Վեհափառը, այդուհանդերձ, լիահույս է, որ բարի կամքի եւ համագործակցության հասարակական ներուժի ներդրմամբ կարելի է այնպիսի գործակցություն հաստատել, որը թույլ կտա կանխարգելել եւ հաղթահարել կրոնական գործոնի շահարկումը, ինչպես նաեւ՝ կրոնական գիտակցության խաթարումով ձեւավորված կոնֆլիկտային իրավիճակները: Եւ այդ տեսակետը փաստելով մասնավոր օրինակով՝ մատնանշում է. «Հարավային Աֆրիկան եւ Հյուսիսային Իռլանդիան կարող ենք ունենալ որպես ոգեշնչող օրինակ այն բանի, թե ինչպես տեւական եւ անգիջելի թվացող հակասություններն անգամ վճռելի են համառ ու տքնաջան աշխատանքի, միջազգային ջանքերի, շահերի եւ հետաքրքրությունների հավասարակշռության եւ ներգրավված բոլոր կողմերի իրավունքների նկատմամբ հարգանքի միջոցով»[42]:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ կրոնների երկխոսության եւ միջկրոնական հարաբերությունների բնականոն ծավալման հիմնահարցերը Հայոց Հայրապետը ամենեւին էլ պարզեցված չի արժեւորում: Այդ գործընթացները խաթարող վերը թվարկված՝ արգելակող պատճառների շարքում նա մատնանշում է նաեւ աշխարհականացման ծայրահեղ դրսեւորումները, մասնավորապես այն, որ «...**զուտ աշխարհիկի հետեւորդները հոգեւոր արժեքների եւ ավանդությունների քննադատությամբ փորձում են նվազեցնել Եկեղեցու եւ կրոնի դերը հոգեւոր եւ բարոյական արժեքների ձեւավորման եւ պաշտպանության գործում, մեկուսացնել այն հանրային կյանքից**: «Խղճի ազատությունը» մեկնաբանվում է իբրեւ ազատություն խղճից, ազատություն՝ երկրպագելու ոչ թե Աստծուն, այլ այլազան կուռքերի, ներառյալ դրամը, իշխանությունը եւ այլն: **Աշխարհայնացված աշխարհի արժեքները փաստորեն փոխակերպվում են, եւ կրոնը դառնում է «ազատ շուկայի» առարկա** հատկապես ԱՊՀ երկրներում, ուր

41 «Էջմիածին», 2010, Դ., էջ 28: Գարեգին Բ. Կաթողիկոսը բազմաթիվ առիթներով ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտությունը հիմնավորում է նաեւ այն կապակցությամբ, որ «Մարդիկ չեն կարող եւ չեն ուզում ապրել թշնամության ու անվստահության, շարունակվող տագնապների, վախի ու սարսափի մեջ: Բոլոր ժողովուրդների երազանքը խաղաղությունը, բարօր ու առաջագնաց կյանքն է, իրենց զավակների ապահով, երջանիկ ներկան ու ապագան». **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընդարձ պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 362: Այդ համոզմունքի դիրքերից Բեսլանի զոհերի հոգեհանգստյան արարողության ժամանակ նա անվարան հայտարարեց. «Ահաբեկչությունը ներկայացավ իր զարհուրելի դեմքով: Այն ինչ տեղի ունեցավ, ջունի արդարացում: Այդ անմարդկային ու սրբապղծ բռնարարքին չկա ներում: Ինչ նպատակներ կարող են վկայակոչել անպաշտպան երեխաների ու կանանց վրա ձեռք բարձրացնողները, թիկունքից նրանց վրա կրակահերթ բացողները: Այն մարդիկ, ովքեր գենքով մտել են դպրոց, նրանք որոշել են երեխաների սպանությունը: Այդպիսի չարաղետ գործերը, արդարեւ, չեն կարող խուսափել մարդկային եւ աստվածային դատաստանից». անդ, էջ 361:

42 Անդ, էջ 203:

արդի ժամանակաշրջանը հատկանշված է նոր կրոնական հոսանքների եւ քայքայիչ տոտալիտար աղանդների անեւախադեպ տարածումով, որոնք հայտնի են իրենց հոգեոբսական գործունեությամբ եւ դրամական հնարավորություններով, որոնք բավական գործուն են մեր երկրների ներկայիս սոցիալական պայմաններում»[43]: Այդ համատեքստում միանգամայն տրամաբանական եւ օրինաչափ պետք է համարել այն, որ միջկրոնական համագործակցության կողմնակից Գարեգին Բ. Կաթողիկոսը կրոնապետների ուշադրությունը հրավիրում է նաեւ կրոնական գործոնի շահարկում հանդիսացող այն փաստին, որ «Համաշխարհայնացման ընթացքներում առաջ են գալիս կրոնական եւ մշակութային ավանդական արժեքների համահարթեցման վտանգները, որոնք սպառնում են ազգային ինքնություններին, մարդկանց հոգեւոր կերտվածքին, ընտանիքի ավանդական սրբագործված ընկալումներին, աճող սերնդի բարոյականության անաղարտությանը»[44]:

Նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ վերը թվարկված մարտահրավերներին դիմակայելու գործում Վեհափառը ներդաշնակ կերպով զուգորդում է ինչպես տեսական մոտեցումները, այնպես էլ՝ գործնական քայլերը: Նա վստահ է նաեւ, որ համադրական այդ մոտեցումը ի զորու է նպաստել հաղթահարելու հասարակական կյանքում «համահարթեցման ցանկացած» փորձի արմատավորումը: Ընդ որում, դա միանգամայն հնարավոր է համարվում նաեւ այն կապակցությամբ, որ Աստծու եւ սեփական ժողովրդի առջեւ կրոնական առաջնորդների խաղաղարարական ջանքերը, նրա համոզմամբ, կոչված են մեծապես նպաստելու կենցաղում բարու արմատավորմանը, հետեւաբար նաեւ՝ ժողովուրդների խորթացվածության եւ օտարման հաղթահարմանը: Եւ այդ գործընթացները կյանքի կոչելու ջանքերը սերտորեն շաղկապելով կրոնների ու մշակույթների երկխոսության հետ՝ Հայոց Ընդհանրական Հայրապետը համակողմանիորեն հիմնավորում է դժվարություններին միասնաբար դիմագրավելու եւ համագործակցությունն ու հարաբերությունները օրինակելի դարձնելու անհրաժեշտությունը: Քրիստոնեական սիրո եւ գործակցության մեկնաբանության վրա հենված այդ մոտեցումների հիմնավորումն է Վեհափառի հետեւյալ պնդումը. «Մենք հավատում ենք աշխարհում առկա խնդիրների դիմագրավմանը, մարդկության բարօրությանն ու բարգավաճմանն ուղղված կրոնների եւ մշակույթների երկխոսությանը: Բոլոր ժողովուրդների համար՝ ազգային առանձնահատկություններով ու ավանդույթներով հանդերձ, ընդհանուր են մարդասիրության, ազնվության ու արդարության արժեքները, ընդհանուր է խաղաղ, ազատ ու երջանիկ կյանքի ձգտումը: Ո՞ր մշակույթում չեն գովերգված հարգանքը, սերն ու աջակցությունը միմյանց հանդեպ, եւ ո՞ր մշակույթում գնահատված ու մեծարված չեն ազնիվն ու առաքինին, մարդկանց համար բարիք գործողները: Մեր՝ հոգեւոր առաջնորդներիս եւ Աստծո Խոսքի բոլոր սպասավորների առաքելությունն է մեր ժողովուրդներին համամարդկային այդ արժեքների մեջ ամրացնելը, հավատքի մեջ զորացնելը, աստ-

43 Անդ, էջ 512:
44 «Էջմիածին», 2010, Դ., էջ 28:

վածահաճո ուղիներով առաջնորդելը, որպեսզի այս աշխարհում երկնապարգև բարին ու բարիքը առատաւան, առաքյալի խոսքի համաձայն՝ «որպեսզի զորության գերազանցությունը Աստծուց լինի եւ ոչ մեզնից» (Բ. Կորնթ. Դ. 7), քանզի համերաշխության, խաղաղության ու բարօրության համար մարդկային ջանքերը ունայն պիտի լինեն առանց աստվածային զորակցության»[45]:

Այն, որ նշված գործընթացում կրոնական գործոնը անուրանալի դերակատարություն ունի, Գարեգին Բ. Կաթողիկոսը հիմնավորում է նաեւ պատմական փորձի ընդհանրացմամբ: Եւ դատապարտելով հասարակական կյանքում ազգայնահալած ամեն մի քաղաքականություն, ինչպես նաեւ այդ գործընթացում կրոնական գործոնի, հատկապես՝ կրոնական ծայրահեղականության եւ արմատականության ամեն մի դրսեւորում՝ Վեհափառը պնդում է միջազգային հանրության կողմից դրանց համընդհանուր եւ անվերապահ դատապարտության անհրաժեշտությունը: Նա հավասարապես անթույլատրելի է համարում նաեւ հանուն քաղաքական շահերի կրոնական գործոնի շահարկումը եւ արդիականության մարտահրավերները հաղթահարելու, հավասարապես նաեւ՝ աշխարհում խաղաղություն հաստատելու գործընթացները դիտարկում է որպես «Արարչի կողմից ողջ մարդկությանը տրված պարգեւ» եւ պնդում, որ Աստվածային այդ պարգեւը պետք է օգտագործվի ի շահ

45 «Էջմիածին», 2010, Դ., էջ 28-29: Կրոնների եւ ավանդական արժեքների վրա համաշխարհայնացման ազդեցության հիմնախնդիրներին նվիրված՝ Բաքվում գումարված կրոնապետերների համաշխարհային գագաթնաժողովի ելույթում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին՝ մեծապես կարեւորելով խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված բոլոր ջանքերը: «Գտնվելով Բաքվում՝ Մենք այսօր փառք ու գոհություն ենք մատուցում Բարձրյալին, որ շարունակվում են ջանքերը խաղաղ կարգավորման՝ առաջնորդելու համար Ղարաբաղյան հակամարտությունը: Այս ուղղությամբ հարկ է կարեւորությամբ ու գնահատանքով նշել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից հետեւողական տարվող աշխատանքները: Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում նաեւ հարցի հանգուցալուծմանն ի խնդիր Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ ի սկզբանե ներդրած միջնորդական ջանքերին: Մեր երկրների իշխանությունները հանրապետությունների նախագահների բարձր մակարդակով նույնպես շարունակում են բանակցային գործընթացը: Ուրախ ենք նաեւ, որ շփումներ կան, եւ երկխոսություն է իրականացվում մեր երկու երկրների քաղաքացիական եւ հասարակական կառույցների ներկայացուցիչների մակարդակով, որի շրջանակում իրակա[նա]ցվում են ֆիլմերի համատեղ նկարահանումներ, երիտասարդական, սպորտային ծրագրեր: Լիահույս ենք, որ ջանքերը պիտի շարունակվեն, որպեսզի հարցի վերջնական կարգավորումը նույնպես ընթանա բացառապես խաղաղ ուղիներով՝ խնդրահարույց հարցերը վճռելով միջազգային օրենքներին ու չափանիշներին համահունչ եւ համապատասխան ժողովուրդների իրավունքների առմտերին: Մենք՝ որպես Հայրապետ Ամենայն Հայոց, կարեւոր ենք նկատում Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի հետ հարցի լուծմանն ի խնդիր մեր ջանքերի ու գործունեության շարունակումը: Մեր պարտականությունն է հորդորել մեր ժողովուրդներին, աջակցել մեր պետությունների նախագահներին՝ խաղաղությամբ ընթանալու դեպի առկա խնդիրների լուծում եւ հարցի վերջնական կարգավորում: Մենք հույս ունենք, որ Կովկասյան տարածաշրջանում առկա մարտահրավերների հաղթահարման եւ խաղաղ ու ստեղծագործ կյանքի ապահովության համար համընդհանուր ջանքերը պիտի պսակվեն ցանկալի արդյունքներով, եւ հայ ու ադրբեջանցի ժողովուրդների համերաշխ կյանքի ու համագործակցության փորձառությունը վերստին պիտի վերընձյուղվի խաղաղության շիվերով: Մենք աղոթում ենք՝ տեսնելու այն գեղեցիկ օրը, երբ բաց կլինեն բոլոր փակ սահմանները տարածաշրջանում եւ ազատ՝ տեղաշարժը մարդկանց, ինչպես ժամանակին Մենք առիթ ենք ունեցել այցելել Բաքու եւ կարճաժամկետ ծառայություն մատուցել հայկական եկեղեցում: Հավատարիմ մնանք Քրիստոսի առաքյալի պատվիրանին, որը նաեւ կոչ է ուղղված ողջ մարդկությանը. «Խաղաղությո՛ւն արեք. եւ խաղաղության ու սիրո Աստվածը թող լինի ձեզ հետ» (Բ. Կորնթ. ԺԳ. 11)». անդ, էջ 29-30:

ողջ մարդկության. «Մեր դիրքորոշումը հստակ է: Ինչպիսի կերպարանափոխությունների էլ ենթարկվի աշխարհը, մարդկության կյանքի սկզբնական ու ճշմարիտ պատկերի, բնույթի եւ նպատակի վերականգնումը հնարավոր է միայն Աստծո առաջնորդությամբ, հավատքի ճանապարհով: **Մենք կոչված ենք ջանադրորեն գործելու՝ մեզ հավատ ընծայողներին ցույց տալու համար մարդկային համերաշխության ստեղծագործ ուժը, որպեսզի երկխոսության ու համագործակցության միջոցով գալիք սերունդներին թողնենք խաղաղ ու ապահով Երկիր մոլորակ**»[46]: Նա նաեւ լիահույս է, որ այդ պարագայում «...նոր դարաշրջանը պիտի լինի հոգեւոր արժեքների վերակենդանացման եւ տարբեր ժողովուրդների համերաշխության շրջան, որի ճարտարապետները մենք (կրոնական առաջնորդները՝ Ա. Ք.) ենք լինելու»[47]:

Եւս մեկ բնորոշ առանձնահատկություն: Ի շահ աշխարհի ժողովուրդների խաղաղ համակեցության՝ Գարեգին Բ. Կաթողիկոսն ամենեին չի սահմանափակվել միայն տեսական քննարկումներով: **Իր գործունեության ընթացքում նա մեծապես կարեւորել է հատկապես կրոնական առաջնորդների հետ երկխոսությունների անհրաժեշտությունը**: Հոդվածի շրջանակներում հնարավորություն չունենալով վերլուծական անդրադարձ կատարել Վեհափառ Հայրապետի՝ տարբեր կրոնների առաջնորդների հետ ունեցած երկխոսության ու հանդիպումների համակարգված վերլուծությանը՝ այս հարցում սահմանափակվում ենք հետեւյալ հպանցիկ նկարագրություններով:

2000 թ. Տերունական վայրեր կատարած իր անդրանիկ այցելության շրջանում Գարեգին Բ. Վեհափառն ընդունել է Երուսաղեմի մուֆթի Շեյխ Աբդլ Ազիմ Սալհաբին՝ իր տեղակալներով եւ օգնականներով: Երուսաղեմի հոգեւոր առաջնորդը, գնահատելով Վեհափառի այցը, ցանկություն է հայտնել միասնաբար դիմագրավել արդիականության կողմից պարտադրված դժվարություններին, իսկ միջկրոնական հարաբերությունները դարձնել օրինակելի: Իր հերթին Վեհափառը, վկայելով արաբ ժողովրդի հոգու ջերմությունը, հավաստել է կրոնական երկխոսության եւ փոխադարձ վստահության կարեւորությունն այն կապակցությամբ, որ դրացիական նման հարաբերությունների ծավալման արդյունքում գալիք դարաշրջանը պետք է վերածվի հոգեւոր արժեքների վերակենդանացման եւ տարբեր ժողովուրդների համերաշխության շրջանի: Նա հավելել է նաեւ, որ միջկրոնական նման հարաբերություններ հաստատելու գործընթացը շատ բանով կախված է իրենց՝ կրոնական առաջնորդների դիրքորոշումից[48]: Այդ շարակարգում պետք է դիտարկել նաեւ կրոնական հանդուրժողականության մեկ այլ փաստ՝ նշված այցի շրջանակներում Վեհափառ Հայրապետի այցը հրեա ժողովրդի ողջակիզման թանգարան եւ զոհերի հիշատակին ծաղկեպսակ զետեղելը[49]:

---

46 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 203:

47 «Էջմիածին», 2000, Ա., էջ 70:

48 Տե՛ս անդ, էջ 71:

49 Տե՛ս անդ:

Միջկրոնական երկխոսության մեկ այլ օրինակ է նույն թվականի աշնանը Ղպտի եկեղեցի կատարած պաշտոնական այցի ժամանակ Գարեգին Բ. Հայրապետի հանդիպումը Ալ Ազհարի Շեյխ Մեծ իմամ Ալ Թանտաուի հետ: Զրույցի ընթացքում Վեհափառն իր շնորհակալությունն է հայտնել արաբ ժողովրդին՝ դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած կրոնական հանդուրժողականության եւ եղբայրական վերաբերմունքի, ինչպես նաեւ հետագա ջերմ հարաբերությունների համար: Իր հերթին Շեյխ Ալ Թանտաուն Գարեգին Բ. Հայրապետին շնորհակալություն է հայտնել հայ համայնքի ունեցած դերի համար՝ որպես Եգիպտոսի Հանրապետության ազնիվ քաղաքացիների[50]:

Նույնը պետք է ասել նաեւ 2002 թ. աշնանը Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմ կատարած այցի ժամանակ տեղ գտած միջկրոնական հանդիպումների եւ երկխոսության վերաբերյալ: Դա է վկայում Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաղաքավարական այցը Թաիլանդի բուդդայականների հոգեւոր առաջնորդին: Անկեղծ զրույցի ընթացքում երկու կրոնապետները մեծապես կարեւորել են կրոնների եւ կրոնական առաջնորդների միջեւ երկխոսությունների անհրաժեշտությունը՝ ի շահ աշխարհի ժողովուրդների խաղաղ համակեցության[51]: Միջկրոնական դրացիական հարաբերությունների մեկ այլ օրինակ է ի պատիվ Վեհափառ Հայրապետի կազմակերպած պաշտոնական հյուրասիրությունը, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը Բանգկոկի կրոնական տարբեր հարանվանությունների ներկայացուցիչների հետ զրույց է ծավալել Բանգկոկի կրոնական խճանկարի, ինչպես նաեւ՝ տարբեր Եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների դերի մասին[52]:

Մեծապես կարեւոր են նաեւ Գարեգին Բ. Կաթողիկոսի՝ Սիրիայի Արաբական Հանրապետության Մուֆթի Շեյխ Ահմադ Բադր-Ալ-Դին Հասսունի հետ ունեցած հանդիպումները: Կարեւորելով նման փոխայցելությունների դերը «արդի աշխարհի խառնակ պայմաններում, երբ հաճախ փորձ է արվում տարբեր աշխարհաքաղաքական նպատակներով կրոնները հակադրել միմյանց», կրոնապետները հավատել են միջկրոնական երկխոսության եւ համագործակցության դերը, մասնավորապես «խաղաղության վերահաստատման եւ այդ գործում բոլոր կրոնների հոգեւոր առաջնորդների ջանքերի մեկտեղման եւ համագործակցության անհրաժեշտությունը», ինչպես նաեւ՝ փոխայցելությունների կազմակերպման, միջկրոնական երկխոսության եւ համագործակցության խթանումը[53]:

Միջկրոնական երկխոսության եւ համագործակցության ոլորտում Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեության անբաժան տարրերից մեկն էլ 2007

50 Տե՛ս «Էջմիածին», 2000, Ժ., էջ 14:

51 Տե՛ս «Էջմիածին», 2002, ԺԱ.-ԺԲ., էջ 10:

52 Տե՛ս անդ, էջ 13:

53 Տե՛ս «Էջմիածին», 2006, Թ., էջ 3-5: Սիրիայի Արաբական Հանրապետության Մուֆթի Շեյխ Ահմադ Բադր-Ալ-Դին Հասսունի հետ ունեցած Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի հերթական հանդիպման մանրամասները տե՛ս «Էջմիածին», 2009, ԺԱ., էջ 21:

թ. փետրվարին Հնդկաստան կատարած հովվապետական այցի շրջանակներում Հայրապետական պատվիրակության այցն է հնդիկ հավատքի հուշարձան ու տաճար հանդիսացող «Ակշարդհամ» համալիր, որի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպել է համալիրի առաջնորդ սվամի Սադհու Ատմասվարուպադասի եւ հնդիկ քահանաների հետ: Միջկրոնական եւ միջմշակութային հարաբերությունների շրջանակներում պետք է դիտարկել նաեւ Ագրա քաղաքի հայկական Ս. Մարտիրոս եկեղեցի եւ գերեզմանատուն այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետի ու նրա գլխավորած պատվիրակության այցը Ագրայի Թաջ Մահալ տաճար[54]:

Եւ, վերջապես, կրոնների երկխոսության եւ համագործակցության, ինչպես նաեւ այդ գործընթացում հոգեւոր եւ մշակութային արժեքների պաշտպանության գործում միջազգային կառույցների դերը խթանելու միտումով Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործուն մասնակցության օրինակների թվում պետք է հիշատակել նաեւ մասնակցությունը արդիական հիմնախնդիրների շուրջ կրոնական համայնքների եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համագործակցության խորհրդակցական մարմնի աշխատանքներին[55]:

54 «Էջմիածին», 2007, Բ.-Գ., էջ 5:

55 Այդ մասին տե՛ս «Էջմիածին», 2010, Դ., էջ 31: